

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 44/1

29 դեկտեմբերի 2016թ.

Քննարկվեց «Գուգսան» ՍՊԸ գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ Կոտայքի ՏՀՏ 30.09.2016թ. թիվ 1010864 ակտի դեմ:

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 26.07.2016թ. թիվ 1010864 հանձնարարագրի համաձայն «Գուգսան» ՍՊԸ-ում (այսուհետ նաև՝ ընկերություն) կատարվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ Կոտայքի ՏՀՏ 30.09.2016թ. թիվ 1010864 ակտը, որով շահութահարկի և ԱԱՀ-ի գծով լրացուցիչ վճարման են առաջադրվել, համապատասխանաբար՝ 3.843.486 դրամ և 8.959.009 դրամ:

Սույն գործին առնչվող փաստական հանգամանքների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովը եկավ եզրակացության, որ Ակտի դեմ բերված գանգատի վերաբերյալ իրավաչափ որոշում կայացնելու համար անհրաժեշտ է լրացուցիչ տեղեկատվություն ստանալ ընկերության կողմից ներկայացված և սույն գործին անմիջականորեն առնչվող փաստաթղթերի վերաբերյալ:

Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի դրույթներով՝ Հանձնաժողովը գտնում է, որ ընկերության գանգատի հիման վրա հարուցված վարչական վարույթը ենթակա է կասեցման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի, «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

«Գուգսան» ՍՊԸ գանգատի հիման վրա հարուցված վարչական վարույթը կասեցնել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ